Կարգապահական գործ թիվ ԿԳ-17041

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի օգոստոսի 22-ի թիվ 135-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/82-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,,

քննության առնելով փաստաբան Արթուր Դանիելյանին (արտոնագիր թիվ 1015) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 07.07.2017թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Արթուր Դանիելյանն ունի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2017թ. փետրվարից 2017թ. մայիս (ներառյալ) ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

07.07.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 183-Ա/ԿԳ-17041 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Արթուր Դանիելյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի

կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

12.07.2017թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Բաբայանին (նիստը նախագահող):

17.07.2017թ-ին գործը ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել 22.08.2017թ-ին, ժամը 19:42-ին:

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Արթուր Դանիելյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդին անհայտ պատճառներով նիստին չէր ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Արթուր Դանիելյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.10.2010թ. (փաստը հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 22.08.2017թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Արթուր Դանիելյանը ունի 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2017թ. փետրվարից 2017թ. մայիս (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 07.07.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Արթուր Դանիելյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 22.08.2017թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 22.08.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Արթուր Դանիելյանի (արտոնագիր 1015, ստացված՝ 16.10.2010թ.) նկատմամբ 2010-2017թթ. ընկած ժամանակահատվածում 7 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ: Արթուր Դանիելյանը 23.05.2014թ. թիվ 104ԿԳ/1 որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է պատասխանատվության նկատողության ձևով, իսկ 16.01.2015թ. թիվ ԿԳ/7-Ա և 16.10.2015թ. թիվ ԿԳ/158-Ա որոշումներով խիստ նկատողության ձևով: 03.03.2016թ. թիվ ԿԳ/44-Ա, 03.10.2016թ. թիվ ԿԳ/105-Ա, որոշումներով անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Արթուր Դանիելյանն ենթարկվել է պատասխանատվության տուգանքի ձևով,

համապատասխանաբար՝ 10.000 ՀՀ դրամի չափով, 15.000 ՀՀ դրամի չափով: 21.11.2016թ. թիվ ԿԳ/168-Ա որոշմամբ Արթուր Դանիելյանը վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նկատողության ձևով:

04.04.2017թ. թիվ ԿԳ/42-Ա որոշումամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Արթուր Դանիելյանն ենթարկվել է պատասխանատվության տուգանքի ձևով, համապատասխանաբար՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արթուր Դանիելյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:* Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ*:

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար*:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը*, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության*:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Արթուր Դանիելյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքներով: Ավելին, կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում նաև, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ

փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Արթուր Դանիելյանին (արտոնագիր թիվ 1015) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:***

2. ***Փաստաբան Արթուր Դանիելյանի (արտոնագիր թիվ 1015) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 25.000 ՀՀ դրամի չափով:***

3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Արթուր Դանիելյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան